ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (08.09.2025թ.-18.12.2025թ.), ՀԻՆԳ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԻ (12.09.2025թ., 02.10.2025թ., 24.10.2025թ., 28.11.2025թ., 16.12.2025թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման տասներորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2025 թվականի սեպտեմբերի 8-ին և ավարտվել դեկտեմբերի 18-ին:

Գումարվել է՝

- 5 հերթական,

- 5 արտահերթ նիստ՝ սեպտեմբերի 12-ին (ՀՀ կառավարության նախաձեռնությամբ), հոկտեմբերի 2-ին (Աժ պատգամավորների նախաձեռնությամբ), հոկտեմբերի 24-ին (Աժ պատգամավորների նախաձեռնությամբ), նոյեմբերի 28-ին (Աժ պատգամավորների նախաձեռնությամբ) և դեկտեմբերի 16-ին (ՀՀ կառավարության նախաձեռնությամբ):

Ազգային ժողովն ընդունել է 249 օրենք, որից՝

- 12-ը «մայր» օրենքներ են՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Մշակութային աճուրդների կազմակերպման մասին», «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին», «Երեխայի իրավունքների եւ երեխայի պաշտպանության

համակարգի մասին», «Ռիելթորական գործունեության մասին», «Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին», «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին», «Պետական տուրքի և պետական տուրքի համար կիրառված տույժերի համաներման մասին», «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» և «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին»:

- 223՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,
- 14՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 236-ի հեղինակը Կառավարությունն է, 9-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները, 4-ինը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը:

Ընդունված օրենքներից 5-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 25-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 5-ինը՝ 36-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 9-ը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 25-ինը՝ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 74-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 4-ինը՝ Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 8-ինը՝ Տարածքային

կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 51-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և 11-ինը՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- **ընդունել է՝**

- «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը:
- «Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատման վերաբերյալ» հայտարարությունը:

- **նշանակել է՝**

- Կենտրոնական բանկի խորհրդի անդամ (**Արմեն Քթոյան**)

- **ընտրել է՝**

- Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (Հունանյան Հռիփսիմե)
- Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի թեկնածու (Արմեն Դանիելյան)
- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի երկու անդամ (Արա Նռանյան, Կամո Սարգսյան)

- **լսել և ի գիտություն է ընդունել՝**

- ՀՀ Կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաղորդումը,
- ՀՀ հաշվեքննիչ պալատի 2024 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2024 թվականի գործունեության մասին հաղորդումը,